«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆ

ԼՈՆԴՈՆ, 8/20 մայիսի։ «Daily-News» լրագիրը տեղեկացել է, որ Թագուհին անձամբ չի բաց անի պարլամենտը։ Գահական Ճառի մէջ ասված կը լինի, որ Անգլիան բարեկամական յարաբերութիւններ ունի բոլոր պետութիւնների հետ։ Մի և նոյն ժամանակ Ճառի մէջ ասված է, որ պետութիւնները միաբան պէտք է աշխատեն իրագործել Բերլինի դաշնագրի երեք կէտերը, որոնք մինչև այժմ անկատար են մնացել։ Նոր կառավարութեան գլխաւոր նպատակն է օգնել պետութիւնների համաձայնութեանը։ Այժմ անգլիական քաղաքականութեան առաջին նպատակն է յունական խնդրի լուծելը։ Աֆղանիստանի մէջ կառավարութիւնը մտադիր է խաղաղութիւն և հանգստութիւն վերականգնել, թոյլ տալով Աֆղանիստանը անկախ և Հնդկաստանին բարեկամ դրացի։

ԿԱՌՈՒԼ, 8/20 մայիսի։ Արգուբախման արձակեց իր զորքերը, յայտնելով, որ այլ ևս զորքերի հարկաւորութիւն չունի, որովհետև անգլիացիների հետ թշնամի չէ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր., երկրորդ 92 ր. 37½ կ., երրորդ 93 ր. 87½ կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 227 ր. 50 կ., երկրորդ 221 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 87½ կ., երկրորդ 90 ր. 87½ կ., երրորդ 90 ր. 75 կ., ոսկի 7 ր. 78 կ.։ Թուաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ 25 5/16 պէնս, ռուսաց 100 ր. Բերլինի վրա արժէ 127 5/8 մարկ, Համբուրգի վրա 215 մարկ 75 պֆ., Փարիզի վրա 266 ֆր.։ Բորսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մայիսի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչ Նիկոլայևսկայա երկաթուղու առանձին գնացքով մայիսի 9-ին երեկոյեան 11 ժամին ուղևորվեցաւ Կովկաս։ Ենթադրում են, որ Վլադիմիր, Միխայլով և մեւ պետական յանձնաժողովների գործը կը վերջանայ մայիսի 9-ին։

Թիֆլիսի Հայոց Ծխական ուսումնարանների տարեկան հաշուքննութիւնները կըսկսուին մայիսի 15-ին և կը շարունակուին մինչև ամսի վերջը, հետևեալ կարգով։

Մայիսի 15 և 16-ին Կուկիս. Թանդոյեան օրիորդական ուսումնարանում.
« 17 — Կուկիս. Ս. Աստուածածնին եկեղեցու. ուսումն.
« 19 և 20 Կաթողիկէ Ս. Գէորգ եկեղ. ուսումն.
« 22 — Հաւլաբարի Ս. Մինաս եկեղ. Եղմիրեան ուսումն.
« 23 — Զուղուրբեթի և Ս. Կարապետ եկեղ. ուսումն.
« 24 — Զորաբաշի և Շամբուռեցոց եկեղ. ուսումն.
« 27 և 28 Հաւլաբարի Մարիամեան օրիորդ. ուսումն.
« 30 և 31 Զգրաշէնի ուսումնարաններում։

Թեմ. վեր. Գ. Բարխուդարեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի ՇՈՒՆ սէտերի տեսակից, սև գոյնի, սպիտակ բիծով կուրծքի վրա, որձ, «Տիգրան» անունով, կորաւ Ալէքսանդրեան այգուց, ապրիլի 28-ի գիշերը։ Գտնողին խնդրում են հասցնել Զուբալովի տան, կենդիտէր Կեղբէրի մագազինից վերև գտնված Պոլտարացկու ընակարանը, Ստեփան Ներետլիին օրինաւոր վարձատրութեամբ։

3—3

УПРАВЛЕНІЕ

Поти Тифлисскаго участка Закавказской желѣзной дороги доводитъ до всеобщаго свѣдѣнія, что съ 10-го сего мая возстановляется движеніе пассажирскихъ поѣздовъ между станціями Тифлисъ и Мцхетъ, но съ пересадкою у станціи Авчалы. Росписаніе отхода поѣздовъ изъ Тифлиса—прежнее, за исключеніемъ поѣзда № 8, (пятичасоваго) который до увѣдомленія отправляемъ не будетъ.

1—1

ԵՂՕՐ ԿԱՍՈՒՄՕՎԻ ԵՒ ԸՆԿ.
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Ցայտնում է հասարակութեանը, որ ցանկացողները կարող են առնել 1 և 2 ներքին 5% փոխառութեան տոմսակները յետաձգութեամբ վճարելով մի տարվայ ընթացքում և ուելի երկար ժամանակի ընթացքում, նոր և շատ շահաւէտ պայմաններով, որոնց մասին տեղեկանալ կարելի է նոյն իսկ կանտորայի մէջ, որ նոյնպէս առնում է այդ տեսակ տոմսակներ։ Դրամանակը գտնվում է Պէտերբուրգ սուորաբերված չէն և նրանց վրա նշանակված չէ հասցէն։

Ցովհաննէս Մ. Բէչերեան

ՑՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՎՍԷՍԵԱՆ
ԲԷՀԲՈՒԹԵԱՆՑ

Որ հայոց փողոցում ամաներ է ծախում, խնդրում է այն անձը, որ նրան երեք նամակ է ուղարկել քաղաքային փոստայով, բայանել իրան թէ ի՞նչ հասցէով պէտք է ուղարկել պատասխանը, որովհետև նամակները սորաբերված չեն և նրանց վրա նշանակված չէ հասցէն։

Ցովհաննէս Մ. Բէչերեան

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱԻՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ։

Երկուշաբթի. Գավրանակի կանանց հիւանդ. Գօրալովի, ներքին հ., Բոտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շահմրօրսկի վիներական և կաշու հ., Բարայեան ջղային և հոգեկան հ.։

Երեքշաբթի. Մինկովիչ խիրուրգական հ., Վ. գօրով վիներական և բողոքի հ., Բէյլիս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցով և Վեր-միշով ներքին հ.։

Չորեքշաբթի. Լիսիցով և Բուդկովսկի ներքին հ., Շահմրօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների։

Հինգշաբթի. Վ. գօրով վիներական և բողոքի հ., Բոտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցով և Վերմիշով ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.։

Ուրբաթ. Գավրանակի կանանց հ., Մինկովիչ խիրուրգիական հ., Կրասնոգլեադով և Լիսիցով ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շահմրօրսկի և Աստվածատուրով վիներական և կաշու հ., Բարայեան ջղային և ներքին հ.։

Շաբաթ Լիսիցով և Վերմիշով ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.։

Բացի այդ բժիշկ Վ. գօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը։

Բժիշկ Բարաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար։ Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը։

Առանձարոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ։

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկարարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար։

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցով։

Թիֆլիսում հրատարակեց ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

1880

ԹԻՖԼԻՍ

ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԱՍԻՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

I

ԹԵԼԱԳԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Հեղ. Դօզլի, թարգ. Ց. Տէր-Գրիգորեանի

II

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵՒՆ ԽՆԴԻՐՔՈՎ,

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ

ՀԱՅՏԱՐԱՐ ԴԱՏԱՒՈՐԻ ՄՕՏ

Կոմեդիա 3 արար., ՓՈԽԱԴԵՐՈՒԹԻՒՆ Ց. Տէր-Գրիգորեանի

Անցքը պատահում է ԹԻՖԼԻՍՈՒՄ

III

ՁԱԻԵՇՏ

1) Պատկերներ ժողովրդական կեանքից, ԲԻՒՐԿ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆՆ կը պատմէ պ. Ց. Տէր-Գրիգորեան

2) Տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեան կերգէ բօսանքներ, ի միջի այլոց «ԴԻՇԵՐԸ ԳՈՆԱԴԱՑՈՒՄ.

Երաժշտութիւն Շիֆֆի։

Տեղերի գինը ՍՈՎՈՐԱԿԱՆ է։

Տոմսակները թէ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ օրը և թէ ՎԱՂՕՐՕՔ կարելի է ստանալ ԱՐԾՐՈՒՆՈՒ թատրոնի կասսայում, ԱՄԵՆԱՅՆ օր առաւօտեան 10—2 և երեկոյեան 6—8 ժամը։

1—5

ՆՈՒՌ-ԷՕՌՔԻ ԶԻՆԳԵՐ

Ամենամեծ կարելու մեքենայի ընկերութեան աշխարհային համբաւն բաւական ըլլալով յանձնել իրեն ձեռագործութիւններն կազմուածքին պարզութեամբը, հաստատութեամբը և այլայլերպ աշխատութիւններն կատարելով, տնական և արուեստաւորներու պիտոյից համար, կը համառօտէ զմեզ համբերու մէկիկ մէկիկ իրենց գերազանցութիւնն ուրիշ հնարուած նման առարկայից վրա։

Վերոյիշեալ Նիու Յօռքի Զինկեր ընկերութիւնը այս ապրիլի սկզբներն բացաւ ուրիշ գլխաւոր քաղաքներու պէս, հոս ևս՝ Թիֆլիս շտեմարան մը այլ և այլ կարելու մեքենաներով, Ամտամանկի փողոցն, Զուպալովին տունն, Երևանի հրապարակի մօտ անմիջապէս և կը խնդրուի խոնարհաբար և պարտայայ ուզող ստանալ այսպիսի մեքենայ դիմել հոն միայն և կը խնդրուի միանգամայն չը խառնակել այս ընկի նորքաց շտեմարանն ուրիշ վաճառականներու հետ, որոնք միայն Զինգերի սուտ անուամբ նշանակներով և պատկերներով կը խաբեն մեր պաշտպանաւորներն և դժբաղդաբար իրենց մեքենաներով կը տարակուսացուցեն սեպհական մերոնց լաւութեան անունն։

Ուրիշ քաղաքներու բնակիչք ալ կրնան դիմել մեզ նամակով թէ մեր ընթացիկ գիներուն ցուցակն ուղարկելու համար, որ կը խրկենք ձրի և թէ որ և է տեղեկութիւն հարցուցնելու համար, որոնց կը պատասխանենք նմանապէս մի և նոյն լեզուով և կարելի արագութեամբ, մեր երեսագիրն է։

Գ. Նեյդլինգերъ. Тифлисъ.

Գ. Նայդլինգեր

Գլխաւոր հոգաբարձու ամբողջ Ռուսաստանի և միջին Եւրոպայի։

Խանութի մէջ կարելի է ուղղել խանգարված մեքենաները։

3—3 (2)

Дозволено Цензурою 12 Мая 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона